



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

10.11.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ՍՑ-ԱՄ-2017/71

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.10.2017թ. թիվ 03/26-3/18241-17 գրությունով «Դասո Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ ոստիկանության 03.10.2017թ. թիվ 11/2194 գրության հիման վրա, 09.10.2017թ. թիվ 03/26-3/18241-17 գրությունով Խորհրդում նախաձեռնել է «Դասո Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Դասող Պրինտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 26.10.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[19405]-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Դասող Պրինտ» ՍՊԸ-ին (այսուհետև՝ Ընկերություն):

Ընկերությունը 31.10.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ Ռ-ԳՀԱՇՁԲ-ՑՈՒՑԱՆԱԿ/2017» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետև նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով էլեկտրոնային համակարգով հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտնել է, որ իր հարկային պարտավորությունները վճարել է 22.09.2017թ.-ին, սակայն վճարումները կենտրոնական գանձապետարանի հաշվին մուտքագրվել են 23.09.2017թ.-ին, ինչով էլ պայմանավորված հարկային համակարգում հարկային պարտավորությունները մարվել են 23.09.2017թ.-ին:

Ամփոփելով Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգը համարվել է չկայացած և նորից է հայտարարվել, որի արդյունքում «Դասող Պրինտ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող:

«Դասող Պրինտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 31.10.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է 31.10.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

3. ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ԿԱ ոստիկանությունը (այսուհետև՝ Պատվիրատու) 03.10.2017թ. թիվ 11/2194 գրությամբ ներկայացրել է «Դասող Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 31.10.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/71 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/71 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար ցուցանակների և հարակից առարկաների պատրաստման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՇՁԲ-ՑՈՒՑԱՆԱԿ/2017» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը Ընթացակարգի մասնացության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն բավարարում է «ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՇՁԲ-ՑՈՒՑԱՆԱԿ/2017» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 729 360 ՀՀ դրամ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Դասո Պրինտ» ՍՊԸ-ին:

5. Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընկերությունից պահանջվել է ներկայացնելու հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև որոշվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարել հարցում՝ մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

6. Պատվիրատուն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ 3-րդ մասով նախատեսված տվյալների ճշտման մասին 23.09.2017թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Դասո Պրինտ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

7. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 26.09.2017թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն **2017թ. սեպտեմբերի 22-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)** ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 276 852 ՀՀ դրամի չափով:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը, «Դասո Պրինտ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.10.2017թ. թիվ 03/26-3/18241-17 գրությունը, ՀՀ ԿԱ ոստիկանության 03.10.2017թ. թիվ 11/2194 գրությունը՝ առդիրներով, «Դասո Պրինտ» ՍՊԸ-ի 31.10.2017թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ**

տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիստուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝

1) գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 526-Ն որոշման (այսուհետև՝ կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետև՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում

հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով, ՀՀ ԿԱ ոստիկանության կարիքների համար ցուցանակների և հարակից առարկաների պատրաստման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՇՁԲ-ՑՈՒՑԱՆԱԿ/2017» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 22.09.2017թ. հայտ է ներկայացրել «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն:

«Դասո Պրինտ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 729 360 ՀՀ դրամ:

Ընկերությունը Ընթացակարգի մասնացության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն բավարարում է «ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՇՁԲ-ՑՈՒՑԱՆԱԿ/2017» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով 26.09.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 276 852 ՀՀ դրամի չափով, որը հիմք ընդունելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը:

Ամփոփելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ ՍՑ-ԱՄ-2017/71 պաշտոնական ընթացակարգով տեղի ունեցած նիստի ժամանակ «Դասո Պրինտ» ՍՊԸ-ի տնօրենը Խորհրդին է ներկայացրել «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի 22.09.2017թ. թիվ 691, 692 և 693 վճարման հանձնարարականները, որոնց համաձայն՝ 22.09.2017թ. «Դասո Պրինտ» ՍՊԸ-ի կողմից համապատասխան հարկատեսակների գծով կատարվել են

համապատասխանաբար՝ 345 000 ՀՀ դրամ, 8 100 ՀՀ դրամ և 10 500 ՀՀ դրամ
(ընդհանուր՝ 363 600 ՀՀ դրամ) գումարի վճարումներ:

Միևնույն ժամանակ «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն հայտնել է, որ իր հարկային պարտավորությունները վճարել է 22.09.2017թ.-ին, սակայն վճարումները կենտրոնական գանձապետարանի հաշվին մուտքագրվել են 23.09.2017թ.-ին, ինչով էլ պայմանավորված հարկային համակարգում Ընկերության հարկային պարտավորությունները մարվել են 23.09.2017թ.-ին, մինչդեռ «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ հաշվի առնելով վճարում կատարելու հանգամանքը:

Խորհուրդը գտնում է, որ նման փաստական հանգամանքներում «Դասո Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ Ռ-ԳՀԱՇԶԲ-ՑՈՒՑԱՆԱԿ/2017» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի կարող դիտարկվել որպես Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ Ընկերությունը, համաձայն ներկայացված վճարման հանձնարարականների, 22.09.2017թ. կատարել է համապատասխան հարկատեսակների գծով վճարումներ՝ մարելով ժամկետանց հարկային պարտավորությունները, ուստի Ընկերությունը օբյեկտիվորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Հետևաբար «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում և Ընկերությանը սույն հիմքով Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 09.10.2017թ. թիվ 03/26-3/18241-17 գրությամբ
«Դասո Պրինտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00022766) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ